

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Շարք). 105

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԳԱՆ. — Պատմություն Հայոց Աղոթամատոյցին (Շարք). 113

ՊԱՏՄԱԿԱՆ

ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Հայ վարուկներու գերդաստան մը եգիպտոսի մէջ, Մէմփիսէն շրջանին (Շարք). 117

ԿԵՎՈՐԿԵԱՆ ԳԱՌՆԻԿ. — Չնկուշն անիրաւած 123

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

FEDERICI TOMMASO. — Հարսանիքի ըզգեստը Միջագետքի պեղումներու լոյսին տակ (Թրգմ. Հ. Քերոբէ Չրաքեան). 120

ԳՐԱԿԱՆ

ԱՇՐԱՖԵԱՆ Յ. — Մեծարեցի գրական նախափայլերը (Շարք). 133

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Գրադատական ճշտումներ «Յովհաննէս Թլկուրացի» տաղասացի ժողովածուի մասին 148

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Շուշան վարդին: Թատրոնի քննարկումը արարով: Ներքոյ արար 155

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Կարօտ հայրենական — Գայլ գետ 168

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Յիշատակ Սայեաք-նովայի 169

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՔԻՒՐՏԵԱՆ Յ. — Յ. Թովմեանի «Յուդայական ազգայնական Արմաշի վանքին» 170

— Թ. Խ. Յակոբեանի «Ուրուսաղիէի Հայաստանի պատմական աշխարհագրութեան» 171

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. — «Երկրաչափութիւն Եւկլիտին» (Խրտ. Գ. Բ. Պետրոսեան եւ Գ. Ա. Աբրահամեան). 174

PHILOLOGIE

ANANIAN P. PAUL. — La vie de St. Mesrop (Suite) 105

LITURGIE

HATZOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite) 113

HISTOIRE

KURDIAN H. — Une famille des gouverneurs arméniens en Egypte, à l'époque des Mamelouks (A suivre) 117

KEVORKIAN KARNIG. — L'histoire injuste de Tchenkouche 123

ARCHEOLOGIE

FEDERICI TOMMASO. — La robe nuptiale à la lumière des fouilles de la Mésopotamie (Trad. par P. Chérubin Tchérakian) 120

LITTERATURE

ACHRAFIAN H. — Le début littéraire de Médzarentz 133

YEREMIAN ARAM. — Réflexions littéraires sur l'édition des poèmes lyriques de Jean de Thelgouran 148

HOVHANNESSIAN P. VAHAN. — Chouchane Varténi (Tragédie en trois actes). Acte IIIe 155

SIRABIAN ARAMAYIS. — Nostalgie de la patrie 168

— Le fleuve Gayl 168

ECHO ARMENIEN

SIRABIAN ARAMAYIS. — Commémoration de Sayath - Nova à Milan 169

RECENSIONS

KURDIAN H. — «Catalogue des manuscrits du Couvent d'Armache», de H. Topdjian 170

— «Esquisse de la géographie historique de l'Arménie», de Th. Kh. Hakobian . 171

DER-NERSESSIAN P. NERSES. — «La géométrie d'Euclide», publiée par G. B. Petrosian et G. A. Abrahamian 174



1843 - 1964
ՀԻՔ. ՏԱՐԻ

ԹԻԻ 4 - 6
ԱՊՐԵԼ - ՅՈՒՆԻՍ

ԲԱԶՄԱՎԵՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXII^e année, 1964, N. 4 - 6 Avril - Juin

ՎԱՐՔ

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

(Շարք. տե՛ս «Բազմավէպ» 1962, Բ. 9-12, էջ 208)

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Սակայն Մաշտոցի մեծութիւնը իր կազմակերպչական եւ առաքելական գործունէութեան մէջն է գլխաւորապէս: Ան Եկեղեցւոյն զառնալուն, Ս. Սահակի հեռահարկեց ուսուցչական կարեւոր դերին, իր նոր գիրքերը գործի դնելով. «Եւ ձեռն առեալ այնուհետեւ աստուածաբանական մշակութեամբ զաւտարանական գործ մշակութեամբ զաւտարանական գործ մշակութեամբ, ի դրել եւ յուսուցանել»¹²⁴: Արդէն ուսուցանելու գործը սկսուած էր Մաշտոցի Եկեղեցւոյ մեկնութիւնն առաջ, երբ վաճառապուհ թաղաւորի հրամանով՝ մանուկներ հաւաքուեցան վաղարշապատի մէջ, Դանիէլեան յանկարծադիր տառերը ուսուցանելու համար. եւ Մաշտոց երկու տարի անձամբ տնայնաց ապր գործին, վարդապետի տնայնացին արժանանալով¹²⁵: Բայց երբ նոր տառերը կերտած վերադարձաւ Եկեղեցւոյն ու «Փորձով ճանչցաւ գործին հաստատութիւնը, ինչպէս կ'ըսէ Կորիւն, աւելի համարձակօրէն եւ աւելի լայն չափով սկսաւ աշակերտներ հաւաքել ու կըրթել»¹²⁶: Կորիւնի այս վկայութիւնը ինք-

նին կը բաւէ փաստելու՝ թէ Մաշտոց ունեցաւ փորձի անյաջող շրջան մը, որուն յաջորդեց յաջողութիւնը, եւ իրեն ներշնչեց վստահութիւն ու կորով՝ գործը մեծցնելու: Իրապէս ալ առաջին աշակերտները շատով հասան կատարելութեան եւ եղան առաջին հիմնադիրները հայ դպրոցներու՝ այլեւայլ գաւառներու մէջ: Սահակ ու Մեսրոպ զանոնք կը զըրկէին Հայաստանի զանազան կողմերը, որպէսզի անոնք՝ իրենց կարգին՝ նոր դպրոցներ հիմնեն ու նոր տառերով կարգան ու քարոզեն Աւետարանը: Ասիկա ինչպէս լուսաւորութեան ծաւալման գործունէութիւնն էր, զոր Մաշտոց եւ Ս. Սահակ ծրագրով յղացան եւ իրականացուցին:

Բայց Մաշտոց աւելի լայն ու հեռատես գործունէութիւն մըն ալ ուղեց անձամբ կատարել: Թողլով Ս. Սահակը թաղաւորական կայանին մէջ, վաղարշապատի

124. ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշտոցի, էջ 54:
125. Անդ, էջ 44:
126. Անդ, էջ 58: